ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Սնանկության գործ թիվ ԵԱՔԴ/0231/04/16
Նախագահող դատավոր՝ Գ. Թորոսյան

Սնանկության գործ թիվ **ԵԱՔԴ/0231/04/16**
2024թ.

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի կողմից թիվ ԵԱՔԴ/0231/04/16 սնանկության գործով 04.07.2024 թվականին կայացված որոշման վերաբերյալ

«04» հուլիսի, 2024թ. **ք. Երևան**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 04.07.2024 թվականին գրավոր ընթացակարգով քննելով «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.10.2021 թվականի որոշման դեմ՝ ըստ Կարեն Սավզյանի դիմումի՝ Արմեն Ավագյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին, նույն պալատի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել՝ վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.10.2021 թվականի որոշումը:

Վճռաբեկ դատարանի դատավոր Արսեն Մկրտչյանս, համաձայն չլինելով 04.07.2024 թվականի որոշման (այսուհետ՝ Որոշում) պատճառաբանական և եզրափակիչ մասերի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում եմ հատուկ կարծիք այդ մասերի վերաբերյալ:

1. Հատուկ կարծիքի հիմնավորումները.

Նախքան Որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի կապակցությամբ հատուկ կարծիք շարադրելը՝ հարկ եմ համարում ընդգծել հետևյալը.

Պարտապան Արմեն Ավագյանը Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 22.05.2017 թվականի «Պարտապանին պատկանող գույքի վաճառքը հրապարակային սակարկություններով իրականացնելու վերաբերյալ կառավարչի միջնորդությունը բավարարելու մասին» որոշումը նոր երևան եկած հանգամանքով վերանայելու բողոք ներկայացրել է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով՝ պատճառաբանելով, որ *«2021թ. հունիսի 17-ի ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչի ոչ արդարացման հիմքով քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշմամբ հաստատված հանգամանքները գոյություն են ունեցել Դատարանի կողմից Որոշումը կայացնելու պահին, սակայն հայտնի չեն եղել ո՛չ բողոքաբեր Արմեն Ավագյանին և ո՛չ էլ Դատարանին: Ավելին, այս փաստերն էական էին Որոշման*

կայացման համար, քանի որ եթե Դատարանը տեղյակ լիներ, որ առանց գույքագրման, առանց գույքի վաճառքի ծրագիրը հաստատելու, կեղծ գնահատման հաշվետվությունների հիման վրա կառավարիչը հրապարակային սակարկություններով վաճառքի թույլտվություն ստանալու նպատակով դիմել է դատարան, ապա կմերժեր կառավարչի միջնորդությունը»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով վերանայելով Դատարանի նշված որոշումը՝ Վերաքննիչ դատարանը, *«հաշվի առնելով այն հանգամանքը, որ 17.06.2021 թվականի քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշմամբ հաստատված է համարվել, որ Հայկ Կոշեցյանը, թիվ ԵԱՔԴ/0231/04/16 սնանկության գործի շրջանակներում հանդիսանալով սնանկության գործով կառավարիչ, կեղծել է ապացույցներ և ներկայացրել թիվ ԵԱՔԴ/0231/04/16 սնանկության գործը քննած դատարանին»,* գտել է, որ *«թե՛ բողոք բերող անձին և թե՛ Դատարանին հայտնի չեն եղել սնանկության գործով կառավարչի կողմից կեղծ փաստաթղթեր կազմելու հանգամանքները, որոնք տվյալ գործի լուծման համար ունեցել են էական նշանակություն»:*

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, Որոշմամբ պատճառաբանելով, որ *«վերաքննիչ բողոքում նշված հանգամանքը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով չէր կարող որակվել որպես «նոր երևան եկած հանգամանք», քանի որ գրավոր կամ իրեղեն ապացույցների կեղծված լինելու արդյունքում ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտ կայացնելու հանգամանքն օրենսդիրը նախատեսել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, և այդ հիմքով դատական ակտը վերանայելու համար անհրաժեշտ պայման է նախատեսել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով այդ հանգամանքները հաստատված լինելը, մինչդեռ տվյալ դեպքում առկա է նախաքննական մարմնի որոշում, որը հանդիսանալով ինքնուրույն դատավարական փաստաթուղթ, չի կարող նույնացվել անձի մեղավորությունը հաստատող մեկ այլ դատավարական փաստաթղթի՝ դատավճռի հետ»,* եզրակացրել է, որ «*Վերաքննիչ դատարանը չէր կարող ղեկավարվել ՀՀ քաղաքացիական դատավարության 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով նախաքննական մարմնի որոշումը (…)»:*

Գտնում եմ, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի նման **նեղ** մեկնությունը չի բխում նոր երևան եկած հանգամանքով դատական ակտը վերանայելու ինստիտուտի նպատակներից հետևյալ պատճառաբանությամբ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով նոր երևան եկած հանգամանքով դատական ակտի վերանայման գործընթացի իրավական կարևորության խնդրին, արձանագրել է, որ գործի նորոգումը նոր երևան եկած հանգամանքների հիման վրա ինքնին չի հակասում իրավական որոշակիության սկզբունքին այնքանով, որքանով այն օգտագործվում է արդարադատության սխալներն ուղղելու համար *(տե՛ս Kuznetsova v. Russia թիվ 67579/01 գանգատով 12.11.2007 թվականի վճիռը):*

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում (ՍԴՈ-701, ՍԴՈ-709, ՍԴՈ-751, ՍԴՈ-758, ՍԴՈ-765, ՍԴՈ-767, ՍԴՈ-833, ՍԴՈ-872, ՍԴՈ-935, ՍԴՈ-1049, ՍԴՈ-1114 և այլն) անդրադարձել է նոր երևան եկած հանգամանքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման ինստիտուտի՝ որպես մարդու խախտված իրավունքներն արդար և արդյունավետ դատաքննությամբ վերականգնելու բացառիկ արդարադատական միջոցի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման, դրա միակերպ ընկալման ու կիրառման խնդիրներին:

Սահմանադրական դատարանը 26.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1222 որոշման մեջ նշել է շարադրված հարցերի կապակցությամբ արտահայտված դիրքորոշումների վերաբերյալ ելակետային նշանակություն ունեցող հետևյալ եզրահանգումները՝

- նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության ստուգումն ***իրավական լուրջ երաշխիք է անձի խախտված իրավունքները վերականգնելու, դատական սխալներն ուղղելու և գործով ճշմարտությունը բացահայտելու ուղղությամբ,***

- այդ հանգամանքներն իրենց բնույթով այնպիսին են, որ չնայած օբյեկտիվորեն գոյություն են ունեցել գործով վերջնական դատական ակտի կայացման պահին, սակայն հայտնի չէին և(կամ) չէին կարող հայտնի լինել թե՛ գործին մասնակցող անձանց և թե՛ դատարանին, կամ հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, կամ որոշ դեպքերում՝ նորահայտ են,

- ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայումը՝ նոր երևան եկած հանգամանքներով, կատարվում է դատավարական համապատասխան ընթացակարգով, որի շրջանակներում իրավասու դատարանը կոչված է լուծելու արդարադատական հետևյալ հիմնական խնդիրները. գործով կայացված որոշման հիմքում չարտացոլված և նոր երևան եկած փաստական հանգամանքների (ապացույցների) ուսումնասիրում, իրավագնահատում և իրավական վեճի լուծման համար օրենսդրության համապատասխան նորմերի ընտրություն, դրանց մեկնաբանում ու կիրառում, ***որոնց հաջորդում են պարտադիր իրավական հետևանքներ, այդ թվում՝ անձի իրավունքների պաշտպանության հետ կապված:***

Շարադրվածով պայմանավորված գտնում եմ, որ նոր երևան եկած հանգամանքով դատական ակտերը վերանայելու ինստիտուտն առանձնահատուկ է այնքանով, որ թույլ է տալիս գործի քննության ավարտից հետո բացահայտված որոշակի հանգամանքների առկայության դեպքում վերանայել օրինականության և հիմնավորվածության տեսանկյունից կասկած հարուցող օրինական ուժի մեջ մտած դատական ակտը: Օրինական ուժի մեջ մտած դատական ակտը վերանայելու բացառիկ հնարավորություն ընձեռող վարույթ լինելով հանդերձ՝ վերանայման ինստիտուտը միաժամանակ քաղաքացիական գործերով պատշաճ արդարադատություն իրականացնելու, ինչպես նաև օրինականությունն ապահովելու լրացուցիչ և կարևորագույն միջոց է:

Հետևաբար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածը մեկնաբանելիս պետք է ելնել նորմի կարգավորիչ նպատակից՝ որպես ուղենիշ ընդունելով ոչ պատշաճ իրականացված արդարադատությունն ուղղելու և գործով ճշմարտությունը բացահայտելու միջոցով անձի խախտված իրավունքները վերականգնելու անհրաժեշտությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, որպես դատական ակտը վերանայելու ընդհանուր հիմք, նախատեսում է ցանկացած հանգամանք, որը գոյություն է ունեցել գործի լուծման պահին, հայտնի չի եղել և չէր կարող հայտնի լինել բողոք բերած գործին մասնակցող անձին ու դատարանին, և գործի լուծման համար ունի էական նշանակություն, որպիսիք ապացուցելու համար օրենսդիրն ապացույցի որևէ կոնկրետ տեսակ չի սահմանել: Մինչդեռ նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսվել են նոր երևան եկած առանձնահատուկ հանգամանքներ, որպիսիք պարունակելով քրեական օրենքով նախատեսված հանցակազմի հատկանիշներ, կարող են հաստատվել միայն օրենքով սահմանված կարգով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Թեև գրավոր կամ իրեղեն ապացույցների կեղծված լինելու դեպքը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսվել է որպես դատական ակտի վերանայման առանձին հիմք, այդուհանդերձ դա չի բացառում դատական ակտը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով վերանայելու հնարավորությունը, եթե բողոք բերած անձը նշված հիմքով վարույթ հարուցելու պայմաններում ապացուցում է, որ գրավոր կամ իրեղեն ապացույցների կեղծված լինելու հանգամանքը գոյություն է ունեցել գործի լուծման պահին, հայտնի չի եղել և չէր կարող հայտնի լինել բողոք բերած գործին մասնակցող անձին ու դատարանին, և գործի լուծման համար ունի էական նշանակություն:

Դատական ակտը վերանայելու վարույթի հետապնդած նպատակների իրագործումն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ գտնում եմ, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածն անհրաժեշտ է **լայն մեկնաբանել** և գրավոր կամ իրեղեն ապացույցների կեղծված լինելու դեպքում օրինական ուժի մեջ մտած դատական ակտը վերանայելը չսահմանափակել միայն նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով՝ բացառելով նույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով դատական ակտը վերանայելու հնարավորությունը: Հակառակ դեպքում անձը ոչ միայն զրկվում է ոչ պատշաճ արդարադատություն իրականացվելու հետևանքով իր խախտված իրավունքները վերականգնելու հնարավորությունից, այլև օրինականության և հիմնավորվածության տեսանկյունից կասկած հարուցող դատական ակտը շարունակում է օրինական ուժի մեջ մնալ՝ այն վերանայելու քրեադատավարական գործիքակազմի «բացակայության» հիմքով:

Տվյալ դեպքում պարտապան Արմեն Գրիգորյանը որպես նոր երևան եկած հանգամանքը հաստատող ապացույց Վերաքննիչ դատարան է ներկայացրել ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ, առաջին դասի խորհրդական Ս. Ս. Սիմոնյանի 17.06.2021 թվականի «Քրեական գործով վարույթը կարճելու մասին» որոշումը, որով պարզվել է, որ թիվ ԵԱՔԴ/0231/04/16 սնանկության գործի շրջանակներում սնանկության գործով կառավարիչ նշանակված Հայկ Կոշեցյանը՝

- կատարել է կեղծ գույքագրում, կեղծել «Այնթափի տեքստիլագործ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անշարժ գույքի գնահատման հաշվետվությունը և ձեռք բերելով կեղծ ապացույցներ՝ դրանք ներկայացրել է Դատարան, որի հիման վրա անշարժ գույքն իրական արժեքից ցածր գնով վաճառվել է,

- կազմել է պարտատերերի ժողովին կից կեղծ արձանագրություն այն մասին, որ Դատարանի շենքում 24.03.2017 թվականին, ժամը 11:00-ին տեղի է ունեցել պարտապան Արմեն Ավագյանի պարտատերերի առաջին ժողովը: Նույն արձանագրության մեջ նշվել է, որ արդեն կատարվել է գույքերի գույքագրում և գնահատում, ինչպես նաև մինչ այդ ժողովի մասնակիցներին ծանուցագրերի միջոցով տեղեկացրել է, որ 24.03.2017 թվականին, ժամը 11:30-ին կատարվելու է Արմեն Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող և երրորդ անձանց կողմից գրավադրված գույքերի, տրանսպորտային և դրամական միջոցների գույքագրումը,

- կազմել և հետագայում Արմեն Ավագյանի և Վահե Մելքոնյանի ստորագրությանն է ներկայացրել 24.03.2017 թվականի թվագրմամբ կեղծ գույքագրման ակտ,

- Դատարան է ներկայացրել «ՎԻ ԷՄ ԱՐ ՓԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 17.01.2017 թվականին կազմված թիվ ՎՄ-30/930 գնահատման հաշվետվությունը, որում նշված է, որ գնահատման հաշվետվության պատվիրատուն հանդիսանում է Արմեն Ավագյանի սնանկության գործով կառավարիչ Հայկ

Կոշեցյանը և վերջինիս հետ 17.01.2017 թվականին կնքվել է թիվ ՎԱ-30/930 պայմանագիրը: Հաշվետվության մեջ նշված է նաև, որ տեղազննման աշխատանքները կատարվել են 16.01.2017 թվականին, իսկ գնահատման աշխատանքները՝ 17.01.2017 թվականին, մինչդեռ քրեական գործի նախաքննության ընթացքում հիմնավորվել է, որ Հայկ Կոշեցյանի պատվերով «ՎԻ ԱՄ ԱՐ ՓԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից գույքի գնահատում առհասարակ չի կատարվել:

Այսինքն՝ նշված ապացույցով հաստատվել է, որ սնանկության գործով կառավարիչ Հայկ Կոշեցյանը սույն սնանկության գործի շրջանակներում ապացույցներ է կեղծել և դրանք ներկայացրել Դատարան, որոնց հիման վրա վերջինս 22.05.2017 թվականին կայացրել է «Պարտապանին պատկանող գույքի վաճառքը հրապարակային սակարկություններով իրականացնելու վերաբերյալ կառավարչի միջնորդությունը բավարարելու մասին» որոշումը:

Նշվածից բխում է, որ թեև սույն գործով առկա չէ գրավոր կամ իրեղեն ապացույցների կեղծված լինելու փաստը հաստատող դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, այսինքն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հիմքը, այդուհանդերձ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ, առաջին դասի խորհրդական Ս.Ս. Սիմոնյանի 17.06.2021 թվականի «Քրեական գործով վարույթը կարճելու մասին» որոշմամբ հաստատվել են սույն սնանկության գործի շրջանակներում ապացույցների կեղծված լինելու մասին այնպիսի հանգամանքներ, որոնք գոյություն են ունեցել գործի լուծման պահին, հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել Արմեն Ավագյանին ու Դատարանին, և գործի լուծման համար ունեն էական նշանակություն: Այսինքն՝ առկա է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դատական ակտը վերանայելու հիմքը:

Կարևոր եմ համարում նշել նաև, որ քրեադատավարական գործիքակազմի գործադրման միջոցով ձեռք է բերվել կոնկրետ անձի կողմից նոր երևան եկած հանգամանք վկայակոչող արարքը կատարելու վերաբերյալ ապացույց: Տվյալ դեպքում դատավարական փաստաթղթի տեսակը՝ 17.06.2021 թվականի «Քրեական գործով վարույթը կարճելու մասին» որոշումը, կայացվել է քրեադատավարական օրենսդրության պահանջներից ելնելով, որը կապված չէ պարտապան Արմեն Ավագյանի վարքագծի հետ: Այն, որ քրեադատավարական օրենսդրությունը կոնկրետ հիմքերի առկայության դեպքում պահանջում է կայացնել քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշում և բացառում է **դատավճիռ** կայացնելու իրավական հնարավորությունը, չպետք է հիմք հանդիսանա պարտապան Արմեն Ավագյանի խախտված իրավունքի վերականգնումը մերժելու համար, քանի որ պարտապան Արմեն Ավագյանը կրում է օրենքով չնախատեսված և իր վարքագծով չպայմանավորված չափազանց ծանր բեռ:

Գտնում եմ, որ Վճռաբեկ դատարանը քննարկվող նորմը **նեղ մեկնաբանելու** հետևանքով անտեսել է իրավունքի գերակայության կարևոր բաղադրատարր հանդիսացող և Սահմանադրությամբ ուղղակիորեն նախատեսված՝ արդյունավետ արդար դատաքննության իրավունքն ու իրավական որոշակիության սկզբունքը:

Վերոշարադրյալ պատճառաբանություններով գտնում եմ, որ Վճռաբեկ դատարանը պետք է մերժեր Բանկի բողոքը և օրինական ուժի մեջ թողներ Վերաքննիչ դատարանի 25.10.2021 թվականի որոշումը, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով Դատարանի 22.05.2017 թվականի «Պարտապանին պատկանող գույքի վաճառքը հրապարակային

սակարկություններով իրականացնելու վերաբերյալ կառավարչի միջնորդությունը բավարարելու մասին» որոշումը վերանայելով Վերաքննիչ դատարանը դատավարական որևէ նորմի խախտում թույլ չի տվել:

Դ Ա Տ Ա Վ Ո Ր **ԱՐՍԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ**